«Լեզուներին և մշակույթներին բազմակի մոտեցումների համակարգ» միջազգային համաժողով Հայաստանում

ԵՊԼՀ ԵԽ լեզվակրթական ծրագրերի իրականացման կենտրոնը և Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնը ս.թ. հոկտեմբերի 1-3-ը անցկացրեցին համատեղ միջազգային համաժողով «Լեզուներին և մշակույթներին բազմակի մոտեցումների համակարգ» խորագրով «Անդամ-երկրների համար վերապատրաստում և խորհրդատվություն» ծրագրի շրջանակներում:

Համաժողովի նպատակը և խնդիրները

Նպաստել բազմալեզու և միջմշակութային կրթության հայեցակարգի ներդրմանը ՀՀ կրթական համակարգում՝ ընդգրկելով ոչ միայն ուսուցիչ վերապատրաստողներին և ուսուցիչներին, այլև ՀՀ ԿԳՆ ներկայացուցիչներին և ուսումնական ծրագրեր կազմողներին:

- Աջակցել կրթական համակարգի մասնագետներին՝ վերանայելու լեզվական քաղաքականության առկա մոտեցումները և որոշելու այն ոլորտները, որտեղ FREPA մոտեցումները կարող են հաջողությամբ ներդրվել:
- Վերհանել այն FREPA հմտությունները, որոնք կաշխատեն ՀՀ կրթական համակարգի համատեքստում:
- Քննարկել, թե ինչպես պետք է FREPA–ն հարմարեցվի հայաստանյան ուսումնական ծրագրերին, որպեսզի ուսուցիչները կարողանան ազատորեն կիրառել բազմակի մոտեցումները:
- Վերապատրաստել ուսուցիչներին, որպեսզի վերջիններս կարողանան աշխատել բազմակի մոտեցումներով:
- Աջակցել ուսուցիչ վերապատրաստողներին՝ կազմելու վերապատրաստման մոդուլներ՝ հիմնված բազմակի մոտեցումների վրա:

Թիրախային խմբերը

- Լեզվաքաղաքականություն մշակողներ
- Ուսուցիչ վերապատրաստողներ
- Դասագիրք կազմողներ
- Ուսումնական ձեռնարկներ կազմողներ
- Դպրոցների տնօրեններ
- Հայերենի, ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի ուսուցիչներ և դասախոսներ
- ԵՊԼՀ մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսներ

Մասնակիցների թիվը՝ 85 հոգի

Համաժողով ծրագիրը

Առաջին օր՝ գիտաժողով

- **Թիրախային խումբը**՝ ՀՀ ԿԳՆ ներկայացուցիչներ, ուսուցիչ վերապատրաստողներ, ուսումնական ծրագրեր մշակողներ, դասագրքեր կազմողներ, դպրոցների տնօրեններ, ԵՊԼՀ ամբիոնների վարիչներ:

- **Գիտաժողովի նպատակը՝** աջակցել կրթական համակարգի մասնագետներին՝ վերանայելու լեզվական քաղաքականության առկա մոտեցումները և որոշելու այն ոլորտները, որտեղ FREPA մոտեցումները կարող են հաջողությամբ կիրառվել:

Երկրորդ օր՝ համաժողով

- **Թիրախային խումբ՝** ուսուցիչ վերապատրաստողներ, ուսումնական ծրագրեր մշակողներ, դասագրքեր կազմողներ:
- **Համաժողովի նպատակը՝** ծանոթացնել մասնակիցներին բազմալեզու և միջմշակութային կրթության նպատակներին, սովորեցնել նրանց ընտրել, հարմարեցնել և կիրառել համապատասխան ուսումնական նյութերը: Աջակցել ուսուցիչ վերապատրաստողներին՝ կազմելու վերապատրաստման մոդուլներ՝ հիմնված բազմակի մոտեցումների վրա:

Երրորդ օր՝ համաժողով

- **Թիրախային խումբը՝** ուսուցիչներ և դասախոսներ, ուսուցիչ վերապատրաստողներ
- **Համաժողովի նպատակը՝** անցկացնել գործնական աշխատանք ուսուցիչների հետ, որպեսզի նրանք կարողանան աշխատել FREPA գործիքակազմով: Համաժողովները կանցկացվեն փորձագետների և ուսուցիչ վերապատրաստողների մասնակցությամբ:

Համաժողովի մասնակիցների հավաստմամբ այդ երեք օրերի ընթացքում նրանք շատ արդյունավետ աշխատեցին փորձագետների և միմյանց հետ:

Համաժողովը եզրափակվեց շնորհակալագրերի և մասնակցության վկայականների շնորհման հանդիսավոր արարողությամբ: